

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԻՑ

1983 թ. նոյեմբերի 10—30 օրերին հովվական այցելությամբ բուլղարահայ թեմում է եղել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմական առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը:

Նոյեմբերի 13-ին, կիրակի օրը, սրբական հայրը Սոֆիայի հայոց եկեղեցում ներկա է եղել ս. պատարագի արարողությանը և նախագահել եկեղեցու բարերարուհի հանգուցյալ Թագուհի Գրիգորյանի մահվան առաջին տարելիցի առթիվ կատարված հոգեհանգստյան պաշտոնին: Նա դրվատանքի ջերմ խոսքերով վեր է հանել հանգուցյալ բարեպաշտ հայուհու հոգևոր ու բարոյական արժանիքները և ոգեկոչել նրա պայծառ հիշատակը:

Նոյեմբերի 11-ին Սոֆիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ ավագ քահանա Պենլյանը, Թեմական Խորհրդի ատենապետ տիար Կարո Տեր-Մեսրոպյանի ուղեկցությամբ, պաշտոնական այցելություն է տվել Բուլղարական քույր Եկեղեցու հովվապետ Տ. Մաքսիմ Սըրբական Պատրիարքին: Սուրբ Սինոդի ընդունարանում Բուլղար Եկեղեցու Գահակալը ջերմորեն ընդունել է Հայ Եկեղեցու ներկայացուցիչներին, որոնք Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Ա Հայրապետի եղբայրական սիրո ողջույններն են փոխանցել Պատրիարք Հորը՝ խորին շնորհակալություն և Նրախտագիտություն հայտնելով նրան, որ բարեհաճել էր հայոց սրբալույս մեռոնի պատրաստման համար Ս. Էջմիածնին նվիրել վարդի յուղ: Այս առթիվ տեր հայրը Սրբական Պատրիարքին նվիրել է Մայր Աթոռի նախաձեռնությամբ վերջերս հրատարակված «Սուրբ Էջմիածին» ալբոմից մի օրինակ և հայկական մի հուշանվեր:

Նոյեմբերի 19-ին Սոֆիայի Բուլղարա-Սովետական բարեկամության սրահում տեղի է ունեցել հանդիսություն՝ նվիրված Հայաստանի Օգնության Կոմիտեի (ՀՕԿ) հիմնադրման 50-ամյակին: Սույն հանդիսությանը, որը կազմակերպված է եղել բուլղարահայ «Երևման» մշակութային միության նախաձեռնությամբ, ներկա է եղել Տ. Տիրայր արքեպիսկոպոսը՝ ընկերակցությամբ Տ. Մեսրոպ ավագ քահանա Պենլյանի և պր. Կարո Տեր-Մեսրոպյանի:

Նոյեմբերի 20-ին, կիրակի օրը, առավոտյան, առաջնորդ սրբական հայրը ս. պատարագ է մատուցել Սոֆիայի հայոց եկեղեցում և Բանին կենաց քարոզությամբ միսիթարել եկեղեցում հավաքված հայ հավատացյալ ժողովրդին: Իր քարոզում Տ. Տիրայր սրբությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնություններն է փոխանցել բոլոր ներկաներին և պատմել Մայր Հայրենիքից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ստացած իր թարմ տպավորությունների մասին: Հավարտ ս. պատարագի ընթերցվել են Հայոց Հայրապետի երկու սրբատառ կոնդակները՝ ուղղված Սոֆիայի հայոց եկեղեցու վարչության ժրաջան անդամներ Հակոբ Զաքրյանին և Թագուհի Փափազյանին: Այնուհետև տեղի հայոց եկեղեցական վարչությունը «Բալկան» ռեստորանում թեմական առաջնորդ սրբությանի պատվին տվել է պաշտոնական ճաշկերույթ:

Նոյեմբերի 22-ին առաջնորդ սրբությանը Սոֆիայից ուղևորվել է Պովդիվ հայաշատ

քաղաքը: Այստեղ նոյեմբերի 27-ին, կիրակի օրը, հայոց եկեղեցում սրբականը ներկա է եղել ս. պատարագին, արտասանել է ոգեշունչ քարոզ և ապա նախագահել Սովետական Հայաստանի 63-րդ տարեդարձին նվիրված կառավարական մաղթանքի արարողությանը: Նույն օրը սրբական հայրը ներկա է եղել նաև «Երևան» մշակութային կապմակերպության Պլովդիվի մասնաճյուղի նախաձեռնությամբ կապմակերպված հանդեսին՝ նվիրված ՀՕԿ-ի հիմնադրման 50-ամյակին և Սովետական Հայաստանի 63-րդ տարեդարձին:

Նոյեմբերի 28-ին Տ. Տիրայր արքեպիսկոպոսը այցելություն է տվել Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի մինիստրությանն առընթեր կրոնական գործերի կոմիտեի աշխատակից պր. Թ. Աբաջիևին՝ ընկերակցությամբ Տ. Մեսրոպ ավագ քահանա Պենլյանի և Թեմական խորհրդի ատենապետ պր. Կարո Տեր-Մեսրոպյանի: Սրբական հոր և պր. Աբաջիևի միջև տեղի է ունեցել սրտագին ջերմ զրույց: Զրույցի ժամանակ ընդգծվել է աշխարհի խաղաղության պահպանման համար գործադրված ջանքերի կարևորությունը: Առաջնորդ սրբականը նշել է, որ ինչպես Բուլղարական քույր Եկեղեցու, այնպես էլ Հայ Առաքելական Եկեղեցու և նրա հավատացյալների համար թանկ ու նվիրական է խաղաղությունը և որ անհրաժեշտ է պաշտպանել ու ամրապնդել այն ոչ միայն աղոթքով, այլև բանիվ ու գործով:

Նոյեմբերի 30-ին Տ. Տիրայր արքեպիսկոպոսը վերադարձել է իր աթոռանիստը՝ Բուխարեստ: